ՀՀ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՍՏՎԵՐԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԵՎ ԴՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ

Հայաստանում իրականացվող բարեփոխումների և տնտեսական զարգացման համար այսօր լուրջ խոչընդոտ է հանդիսանում տնտեսության ստվերային հատվածը, որի առաջացման պատճառ է հանդիսացել հանրապետությունում 1990թ. սկզբում տնտեսական բարեփոխումների շրջանակներում իրականացված տնտեսության ազատականացման գործընթացները, մասնավոր սեփականության հաստատումը, եկամուտների ցածր մակարդակը և բնակչության կենսամակարդակի կտրուկ անկումը, նոր և չկայացած հարկային և մաքսային քաղաքականությունը: Ստվերայնության դեմ պայքարի և պատժի մեղմ միջոցները նպաստեցին մեր երկրում, մասնավորապես ծխախոտի արդյունաբերությունում ստվերային տնտեսության ծավալների ընդարձակմանը:

Հանրապետությունում այսօր ծխախոտի արտադրանքի շուկայում առաջացած ստվերայնությունը հասել է մեծ չափերի, որի հիմնական գրավականը հանդիսանում է մաքսանենգ ճանապարհով ներկրված և չդրոշմավորված ծխախոտի արտադրանքի վաճառքը:Հետազոտողների գնահատմամբ ծխախոտի արտադրանքի համաշխարհային արտահանման ծավալների 30% կամ ավելի քան 355 մլրդ. հատ սիգարետ կորում է մաքսանենգության արդյունքում, որը համեմատած մյուս սպառողական ապրանքների հետ, որոնք վաճառվում են համաշխարհային շուկայում, բավականին բարձր տոկոսային բաժին է կազմում:[1] Նշված պրոբլեմը ավելի է սրվում այն երկրներում, որոնց հարևան պետություններում գոյություն ունի գնային խիստ տարբերություններ:

Համաձայն ՀՀ Վիճակագրության ազգային ծառայության կողմից 1998թ. կատարված հետազոտության արդյունքների, հանրապետությունում մեկ ծխողի կողմից սիգարետի օրեկան միջին սպառումը կազմում է 1.035 տուփ կամ 20.7 հատ, այդ թվում տղամարդկանց մոտ 1.046 տուփ, կանանց մոտ

1. Curbing the epidemic: Governments and the Economic of Tobacco Control. Copyright 1999 by the international bank for Reconstruction and Development/The World Bank, p. 86.

0.616 տուփ, այդպիսով մեկ ծխողի կողմից սիգարետի տարեկան միջին սպառումը կազմելով 369 տուփ, այդ թվում տղամարդկանց մոտ՝ 376 տուփ և կանանց մոտ՝ 223 տուփ, որը մենք ընդունում ենք որպես հիմք հանրապետության մասշտաբով ծխախոտի փաստացի սպառման իրական ծավալների գնահատման համար: Համաձայն նույն հետազոտության ՀՀ-ում ծխում է 16 և բարձր տարիքի բնակչության 31.2% կամ 711 հազար մարդ, չնայած այն փաստին, որ նշված ժամանակաշրջանից համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների բնակչության թվաքանակը աճել է՝ 1997թ. 3.78 մլն-ից հասնելով 2000թ-ին 3.8 մլն. մարդու, ըստ որի կարելի է ենթադրել, որ ծխողների քանակը նույնպես մեծացել է: Կարևոր է նշել, որ ծխողների ընդհանուր քանակում 97.9% կազմում են տղամարդիկ, 2.1% ՝ կանայք:

Այսպիսով, ստացվում է, որ հանրապետությունում սիգարետի միջին տարեկան սպառումը կազմում է 263.1 մլն. տուփ կամ 5262 մլն. հատ սիգարետ, այդ թվում՝ 143.5 մլն. տուփ (54.6%) կամ 2870 մլն. հատ տեղական արտադրության և 119.5 մլն. տուփ (45.4%) կամ 2390 մլն. հատ սիգարետ արտասահմանյան արտադրության :

ՀՀ ծխախոտի արդյունաբերությունում ստվերայնության մակարդակի հաշվարկը[1]
(մլն. հատ) (աղյուսակ 1)

Անվանում	1995	1996	1997	1998	1999	2000
Արտադրանք	1042	152	815	2489	3132	2096
արտահանում	-	-	-	34	87	77
Ներմուծում	821	1118	1286	3135	1079	1135
Տեղական շուկայում ամբողջ արտադրանքը	1863	1270	2101	5590	4124	3154
Ստվերայնության մակարդակը (%)	64.6	75.9	60.1	-	21.6	40.1

Համաձայն վերը նշված աղյուսակ 1-ի 1995 թ. ծխախոտի արտադրանքի տեղական շուկայում ստվերայնությունն կազմել է 64.6%, որը հաջորդ տարում հասել է 75.9%՝ աճելով 11.3%-ով: 1997թ. վերջինս կազմել է

1. Աղյուսակը կազմված է ատենախոսի կողմից՝ հիմնվելով ՀՀ ԱՎԾ տվյալների վրա:

60.1%. իսկ 1998թ. համաձայն ԱՎԾ տվյալների ծխախոտի տեղական արտադրանքի շուկայում ստվերայնության մակարդակը մոտ է եղել զրոյին ավելացնելով ծխախոտի արտադրանքի իրացման մակարդակը և ծխողների թվաքանակը, որի հիմնական պատճառը հանդիսացել է վերջինիս մատչելի գինը: 1999թ. հաստատագրված վճարի դրույքաչափի բարձրացումը նպաստեց այս շուկայում ստվերայնության աճին 21.6%-ով, որը 2000թ. հասավ 40.1%-ի: Վերը նշված տենդենցը նկատվում է նաև ողջ տնտեսության մասշտաբով կատարվող ստվերայնության մակարդակի փոփոխության մեջ:

Փողի պահանջարկի մեթոդով և ՀՀ ԱՎԾ կողմից հաշվարկված Հայաստանի ստվերային տնտեսությունը բնութագրող ցուցանիշները 1994-2000թթ.: Տոկոսը տվյալ տարվա պաշտոնական անվանական ՀՆԱ-ի նկատմամբ:[1]

Անվանում	1994	1995	1996	1997	1998	1999	2000
Ստվերային տնտեսություն (%)	33.4	46.1	62.4	66.3	55.2	54.5	60.3
Չհաշվառվող տնտեսություն (%)[2]	27.0	31.6	34.3	27.2	25.6	29.0	-

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, հանրապետությունում ստվերայնության մակարդակը եղել է իր նվազագույն մակարդակին 1994թ., որը պայմանավորված է ազգային արժույթի նոր ներդրմամբ, իսկ առավելագույն մակարդակին հասել է 1997թ. կազմելով ՀՆԱ-ի 66.3%-ը: Նշենք նաև որ ցուցանիշը կմեծանա ևս 10-15%, եթե հաշվարկենք նաև արտարժույթով իրականացվող ստվերային գործարքների ծավալները:

Այս ամենով հանդերձ, գոյություն ունի դեռևս շատ քիչ փորձ կապված մաքսանենգության դեմ պայքարի արդյունավետության հետ: Համենայն դեպս դրանցից կարևորվում են մի քանիսը, մասնավորապես

ա. սիգարետի տուփերի օրինականությունն կարելի է առավել տեսանելի դարձնել սպառողների և օրինապահ մարմինների համար, օրինակ հարկային դրոշմանիշի օգտագործումը, որոնք դժվար կլինի կեղծել: Կտրուկ և

1.Հաշվարկներում օգտագործվել են IMF International Financial Statistics 2000, ինչպես նաև <<Armenia Economic Trends. Quarterly Issue, October-Desember 2000>> (TACIS) տեղեկագրերից վերցված տարբեր ցուցանիշների ամսական և տարեկան տվյալները:
2.Չհաշվառվող տնտեսության վերաբերյալ տվյալները վերցված են ՀՀ ԱՎԾ պաշտոնական գրությունից: 2000թ. համապատասխան գնահատականները բացակայում են:

ամենատարբեր բժշկական նախազգուշացումները հայերեն լեզվով նույնպես օգնում են տարբերել օրինական վաճառքը անօրենից.

բ. մաքսանենգության դեմ պատժի չափերը պետք է խիստ լինեն, որպեսզի չխթանեն այն մաքսանենգների գործունեությանը, ովքեր ներկայումս կարծում են, որ քրեորեն հետապնդման պատասխանատվության ռիսկի չափը շատ փոքր է,

գ. ծխախոտի արտադրանքը արտադրողից մինչև վերջնական սպառող շղթայի մեջ բոլոր կողմերը պետք է թույլատվություն ունենան,

դ. պետք է պահանջել, որ արտադրողը իր կողմից արտադրված ծխախոտի տուփի վրա նշի սերիական համարը, որը թույլ կտա հսկել վերջինիս ճանապարհը, ինչպես նաև կտեղեկացնի մեծածախ վաճառք իրականացնողի, ներկրողի, բաշխողի (դիստրիբյուտորի) մասին,

ե. պետք է պարտադրել արտադրողներին, որպեսզի հնարավորինս վերահսկեն իրենց կողմից արտադրված ծխախոտի արտադրանքի շարժը:

Վերը նշված միջոցառումների իրականացումը կխթանի հանրապետությունում ծխախոտի արտադրանքի արտադրության արդյունավետության բարձրացմանը:

Զարմանալի է, բայց տնտեսագիտական տեսանկյունից ծխախոտի արդյունաբերությունը մաքսանենգության գոյությունից քաղում է իր օգուտները: Պրակտիկայում, եթե մաքսանենգ ճանապարհով ներկրված ծխախոտի արտադրանքի քանակը գերազանցի օրինական ճանապարհով վաճառվածին, ապա սիգարետների միջին գինը շուկայում կիջնի՝ բարձրացնելով վաճառքի քանակը:

Այսպիսով, մաքսանենգությունը ստիպում է, որպեսզի կառավարությունը հաստատագրված վճարի դրույքաչափերի մակարդակը սահմանի համեմատաբար ցածր մակարդակի վրա, ինչպես նաև պայքարի կոռուպցիայի դեմ, քանի որ վերջինիս աճը բարձրացնում է մաքսանենգության մակարդակը հանրապետությունում: Այս ամենի արդյունքում մի բան պարզ է, որ տուժում է ՀՀ ծխախոտի տեղական արտադրանքի արտադրությունը՝ կրճատելով վերջինիս սպառումը, հետևաբար և արտադրության ծավալը: